



ՀՅԴ Քարոզչական Մարմին. «Համշէնը Անցեալի Եւ Ներկայի Խաչմերուկներում» Վաւերագրական Ժապաւենի Ցուցադրութիւն

0 Featured-News, Գաղութային November 7, 2015

PRINT EMAIL A- A+



Երէկ՝ ուրբաթ, 6 նոյեմբեր 2015-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ «Համշէնը անցեալի եւ ներկայի խաչմերուկներում» վաւերագրական ժապաւենի ցուցադրութիւնը՝ կազմակերպութեամբ ՀՅԴ քարոզչական մարմինին:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Հուրի Փափազեան-Էմմիեան: Ան ըսաւ, թէ վերջին տարիներուն համշէնահայութեան հիմնախնդիրները դարձած են առօրեայ խնդիրներու քննարկման անբաժան մէկ մասնիկը: Ապա նշեց, որ Համշէնի մասին տեղեկութիւններու բացայայտման առնչութեամբ իր մեծ դերը ունեցած է բանասէր Լուսինէ Սահակեան, որ պատրաստած է «Համշէնը անցեալի եւ ներկայի խաչմերուկներում» ժապաւենը, որուն մէջ ներկայացուած է 18-րդ դարու Օսմանեան կայսրութեան մէջ ներկայ վիճակը բռնի իսլամացած համշէնահայութեան սերունդներուն, որոնք այսօր գլխաւորաբար կ'ապրին Ռիզէ, Էրզրում եւ Արդուին նահանգներուն մէջ:

Վաւերագրական ժապաւենը 2012-ին Հովիվուտի «Արփա» միջազգային փառատօնին մրցանակի արժանացած է եւ մասնակցած նաեւ «Ոսկիէ ծիրան», «Նուտ» եւ այլ փառատօններու:



Լուսինէ Սահակեան



Հուրի Փափազեան-Էմմիեան



Միւր Յովհաննիսեան

Խօսք առաւ ժապաւենի հեղինակ Լուսինէ Սահակեան: Ան ըսաւ, որ իր երազանքը իրականանալով գտնուած է Համշէն եւ ծանօթացած իրավիճակին: Երեք տարիներու աշխատանքին շնորհիւ ուսումնասիրած է տարածքը, գիւղ-գիւղ, լեռներն ու քաղաքները շրջած եւ յաջողած է հաւաքել բազմաթիւ փաստեր ու վաւերագրական տեղեկութիւններ: Ան ըսաւ, թէ աշխատած է անաչառօրէն ներկայացնել համշէնցի իր իսկ միջավայրին մէջ: Ժապաւենի ցուցադրութենէն եւ զիրքերու հրատարակութենէն ետք ան ենթարկուած է հակայարձակումի թրքական կողմէն՝ աղաւաղելու պատմական

իրականութիւնները: Լուսինէ Սահակեան ըսաւ, թէ Արդուինի, Էրզրումի եւ Ռիզէի տարածքներու համշէնցիներու կերպարները անձամբ կ'արտայայտուին: Բռնի իսլամացածներու որոշ տոկոս մը մոռցած է Համշէնի բարբառը, բայց շնորհիւ իր պնդումներուն կրցած է տեղանուններու եւ այլ բառերու պրպտումներէն յայտնաբերել իրականութիւնը:

Ան նշեց, որ ժապաւենը կը սկսի ձայնային կանչերով՝ խրիսնջոցներով, որոնք կը գործածուին հաղորդակցելու համար տարածութեան մէջ: Ժապաւենին մէջ անդրադարձ կայ Համշէնի իգական յատուկ տարագին, փուշիին, անոնց մշակոյթին, բարբառային արտայայտութիւններուն, կենցաղին: Ան հաստատեց, որ այցելութենէն ամենէն շատ տպաւորուած է Եղնովիտ Խաչէքարի վանքէն մնացած քանի մը քարերով եւ քարակոյտերով:

Շուրջ մէկուկէս ժամ տեւած ժապաւենը կը խօսի Ռիզէ եւ Արդուին նահանգներուն մէջ համշէնցիներու պարբերուն, երաժշտութեան, բարբառին, բանահիւտութեան, հաւատալիքներուն, համշէնցիներու առօրեայ կենցաղին ու մանաւանդ խոհանոցին:

Աւարտին Երեւանի պետական համալսարանի պատուիրակութեան Լիբանան այցելութեան եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Երեւանի

պետական համալսարանի Հայագիտական հետազոտութիւններու հիմնարկի փոխտնօրէն Միւր Յովհաննիսեան: Ան ըսաւ, թէ պատուիրակութիւնը շնորհիւ այցելութեան յաջողեցաւ հանդիպիլ աւելի քան 200 երիտասարդներու հետ եւ խօսիլ կրթական ծրագիրի մասին: Վերջին 4 տարիներու աշխատանքին շնորհիւ լիբանանահայ 4 ուսանողներ Երեւանի պետական համալսարանին մէջ կը հետեւին հայրենագիտական ճիւղին: Ան նշեց, որ պատուիրակութիւնը յաջողած է այցելել մօտ 11 դպրոցներ, որոնց պիտի մատակարարուի մասնագիտական գրականութիւն: Ան կոչ ուղղեց ուսուցիչներուն եւ մասնագէտներուն օգտուելու առիթէն՝ մասնակցելով սփիւռքի նախարարութեան կազմակերպած «Մփիւռք» ամառնային դպրոցի դասընթացներուն:

Ձեռնարկի աւարտին ներկաներուն տրամադրուեցաւ ցուցադրուած ժապաւենը:

Է